ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է «ՀԵՐԱՑԻ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

20.10.2014 13:11

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում այսօր՝ հոկտեմբերի 20-ին՝ հյուրանկալվել էին ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոցի հումանիտար հոսքի աշակերտները:

Այս նախաձեռնությունը նպատակաուղղված է մասնագիտական կողմնորոշմանը նպաստելուն աշնանային և գարնանային արձակուրդների ընթացքում: Թվով 20 աշակերտներ հանդիպեցին Փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանին և ՓՊ աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին:

Պալատի նախագահը սեփական փորձով աշակերտներին է ներկայացրել փաստաբանի աշխատանքը: Արա Ջոհրաբյանը աշակերտների հետ քննարկել է փաստաբանի կերպարի մասին նրանց պատկերացումները և կարևորել, որ գիտելիք կուտակելով է, որ քաղաքացին կարող է հարթել սեփական ճանապարհը:

«Հերացի» ավագ դպրոցի աշակերտները շրջել են պալատով: Նրանց ընդունել է նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը, ներկայացրել է նրանց դպրոցի աշխատանքները, ուսուցման մեթոդները: Այնուհետև Հանրային պաշտպանի գրասենյակում երեխաները ծանոթացել են փաստաբանների իրականացվող աշխատանքներին:

Աշակերտները հոկտեմբերի 20-24-ը օրական 1-2 ժամով պրակտիկա կանցնեն ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Առաջարկվող նորություններ

30.10.2015ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ



17.03.2016ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 195 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })